EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՈՐՈՇՈՒՄ

Գանգատ թիվ 56724/12

Լեռնիկ ԱՍԱՏՐՅԱՆՆ ընդդեմ Հայաստանի

եւ ութ այլ գանգատներ

(տե՛ս կից աղյուսակը)

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Առաջին բաժանմունք), 2020 թվականի սեպտեմբեր 3-ին հանդես գալով Կոմիտեի հետեւյալ կազմով՝

Քրշիշթոֆ Վոյտիչեկ [Krzysztof Wojtyczek]՝ *Նախագահ*,

Լինոս-Ալեքսանդր Սիցիլիանոս [Linos-Alexandre Sicilianos],

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan]՝ *դատավորներ*,

եւ Լիվ Տիգերշտետ [Liv Tigerstedt]՝ *Բաժանմունքի քարտուղարի տեղակալի պաշտոնակատար*,

հաշվի առնելով կից աղյուսակում նշված տարբեր ամսաթվերին ներկայացված վերը նշված գանգատները,

հաշվի առնելով պատասխանող Կառավարության կողմից ներկայացված հայտարարությունները, որոնց համաձայն Դատարանից պահանջվում է գանգատները հանել քննվող գործերի ցուցակից,

անցկացնելով խորհրդակցություն, որոշեց հետեւյալը.

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Դիմումատուների ցանկը ներկայացված է կից աղյուսակում:

Դիմումատուների՝ իրենց կալանքի համար ներպետական դատարանների կողմից համապատասխան եւ բավարար պատճառներ չներկայացնելու վերաբերյալ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն ներկայացված բողոքներն ուղարկվել են Հայաստանի կառավարություն (Կառավարություն): Որոշ դիմումատուներ այլ բողոքներ են ներկայացրել նաեւ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի համաձայն:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

Հաշվի առնելով գանգատների համանման խնդրո առարկան՝ Դատարանը նպատակահարմար է գտնում դրանք քննել համատեղ՝ մեկ որոշմամբ:

Կառավարությունը Դատարանին տեղեկացրել է, որ սույն բողոքներով բարձրացված խնդիրների լուծման նպատակով առաջարկել է միակողմանի հայտարարություններ անել: Այն նաեւ Դատարանից պահանջել է գանգատները հանել քննվող գործերի ցուցակից՝ Կոնվենցիայի 37-րդ հոդվածին համապատասխան:

Կառավարությունն ընդունել է, որ խախտվել են դիմումատուների՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով երաշխավորված իրավունքները: Այն առաջարկել է դիմումատուներին վճարել կից աղյուսակում մանրամասն ներկայացված գումարները եւ Դատարանին առաջարկել է գանգատները հանել քննվող գործերի ցուցակից՝ Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետին համապատասխան: Գումարները պետք է փոխարկվեն պատասխանող պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով, եւ պետք է վճարվեն Դատարանի որոշման մասին ծանուցվելու

օրվանից երեք ամսվա ընթացքում: Այդ գումարները նշված եռամսյա ժամկետում չվճարելու դեպքում Կառավարությունը պարտավորվում է այդ ժամկետը լրանալու օրվանից մինչեւ վճարման օրն այդ գումարների համար վճարել պարզ տոկոսներ՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ:

Վճարումը համարվում է գործերի վերջնական լուծում:

Կառավարության միակողմանի հայտարարությունների պայմանները սույն որոշման կայացման օրվանից մի քանի շաբաթ առաջ ուղարկվել են դիմումատուներին: Դատարանը հայտարարությունների պայմաններն ընդունելու վերաբերյալ պատասխան դիմումատուների կողմից չի ստացել:

Դատարանը նշում է, որ 37-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետը հնարավորություն է տալիս գործը քննվող գործերի ցուցակից հանելու, եթե՝

> «... Դատարանի կողմից հիմք ընդունված որեւէ այլ պատճառով գանգատի քննությունը շարունակելն արդարացված չէ»:

Այսպիսով, Դատարանը կարող է 37-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի համաձայն գանգատները հանել գործերի ցուցակից՝ պատասխանող Կառավարության կողմից միակողմանի հայտարարության հիման վրա, նույնիսկ եթե դիմումատուները ցանկություն են հայտնում, որ գործի քննությունը շարունակվի (տե՛ս, մասնավորապես, *Թահսին Ակարն ընդդեմ Թուրքիայի* (նախնական առարկություններ) [ՄՊ] [*Tahsin Acar v. Turkey* (preliminary objections) [GC]] վճիռը, թիվ 26307/95, §§ 75-77, ՄԻԵԴ 2003-VI*)*:

Դատարանը սահմանել է հստակ եւ ծավալուն նախադեպային իրավունք այն բողոքների առնչությամբ, որոնք վերաբերում են ներպետական դատարանների կողմից կալանքի համար համապատասխան եւ բավարար պատճառներ չներկայացնելուն (տե՛ս, օրինակ, *Արա Հարությունյանն ընդդեմ Հայաստանի*, թիվ 629/11, §§ 48 եւ այլն, 2016 թվականի հոկտեմբերի 20):

Հաշվի առնելով Կառավարության հայտարարությունների մեջ բերված փաստարկների բնույթը, ինչպես նաեւ առաջարկվող փոխհատուցման գումարը, որը համապատասխանում է համանման գործերով շնորհված գումարներին՝ Դատարանը համարում է, որ գանգատների քննությունը շարունակելն այլեւս արդարացված չէ (37-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետ):

Հաշվի առնելով վերոնշյալ դիտարկումները՝ Դատարանը բավարարված է համարում այն պայմանը, որ մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը, ինչպես սահմանված է Կոնվենցիայով եւ դրան կից արձանագրություններով, չի պահանջում շարունակել գանգատների քննությունը (37-րդ հոդվածի 1-ին կետ, վերջում):

Ի վերջո, Դատարանն ընդգծում է, որ եթե Կառավարությունը չկատարի իր միակողմանի հայտարարությունների պայմանները, գանգատները կարող են վերստին ընդգրկվել քննվող գործերի ցուցակում՝ Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան (*Յոսիպովիչն ընդդեմ Սերբիայի* (որոշում) [*Josipović v. Serbia* (dec.)], թիվ 18369/07, 2008 թվականի մարտի 4):

Հաշվի առնելով վերոնշյալը՝ նպատակահարմար է գործերը հանել քննվող գործերի ցուցակից՝ կապված կալանքի համար համապատասխան եւ բավարար պատճառների բացակայության վերաբերյալ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն ներկայացված բողոքների հետ:

Որոշ դիմումատուներ բողոքներ են ներկայացրել նաեւ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի համաձայն:

Դատարանը քննել է կից աղյուսակում ներկայացված գանգատները եւ համարում է, որ իր տիրապետման տակ գտնվող ամբողջ նյութի լույսի ներքո եւ այնքանով, որքանով բողոքարկվող հարցերը գտնվում են իր իրավասության շրջանակներում, այդ բողոքները կա՛մ չեն համապատասխանում Կոնվենցիայի 34-րդ եւ 35-րդ հոդվածներով սահմանված ընդունելիության չափորոշիչներին,

կա՛մ չեն բացահայտում Կոնվենցիայով կամ դրան կից արձանագրություններով ամրագրված իրավունքների եւ ազատությունների խախտման որեւէ դրսեւորում:

Այստեղից հետեւում է, որ գանգատների այս մասը պետք է մերժվի՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան:

Այս հիմնավորմամբ Դատարանը միաձայն՝

Որոշում է միացնել գանգատները.

Ընդունում է ի գիտություն պատասխանող Կառավարության հայտարարությունների պայմանները, որոնք վերաբերում են դիմումատուների կալանքի համար դատարանների կողմից համապատասխան եւ բավարար պատճառներ չներկայացնելուն, եւ դրանում նշված պարտավորությունների կատարումն ապահովելու համար նախատեսված միջոցառումները.

Որոշում է գանգատների այս մասը հանել իր գործերի ցուցակից՝ Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետին համապատասխան.

Հայտարարում է գանգատների մնացած մասն անընդունելի:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2020 թվականի սեպտեմբերի 24-ին:

Լիվ Տիգերշտեդտ	Քրշիշթոֆ Վոյտիչեկ
Քարտուղարի տեղակալի	Նախագահ
պաշտոնակատար	

ՀԱՎԵԼՎԱԾ

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն ներկայացված բողոքներ պարունակող գանգատների ցանկ

(կալանքի համար համապատասխան եւ բավարար պատճառների բացակայություն)

Թիվ	Գանգատ թիվ Ներկայացման ամսաթիվը	Դիմումատուի անունը Ծննդյան ամսաթիվը	Ներկայացուցչի անունն ու գտնվելու վայրը	Կառավարության հայտարարությունն ստանալու ամսաթիվը	Դիմումատուի մեկնաբանություններն ստանալու ամսաթիվը, առկայության դեպքում	Յուրաքանչյուր դիմումատուին նյութական եւ ոչ նյութական վնասի եւ ծախսերի ու ծախքերի համար շնորհվող գումարը (եվրոյով)[1]
1.	56724/12 24.08.2012թ.	**Լեոնիկ ԱՍԱՏՐՅԱՆ** 05.06.1986թ.	Ջաղինյան Սամվել Երեւան	05.03.2020թ.	.	1 000
2.	66641/12 05.10.2012թ.	**Քրիստինե ՊԵՏՐՈՍՅԱՆ** 08.08.1975թ.	Հակոբյան Կարեն Երեւան	03.03.2020թ.	05.05.2020թ.	1 400
3.	5786/17 28.12.2016թ	**Էդգար ԴԱՎԹՅԱՆ** 25.07.1994թ.	Ալումյան Հայկ Երեւան	21.02.2020թ.	03.04.2020թ.	600
4.	10146/18 20.02.2018թ.	**Արտակ ԱՅՎԱԶՅԱՆ** 29.11.1981թ.	Ալումյան Հայկ Երեւան	21.02.2020թ.	03.04.2020թ.	800
5.	10305/18 16.02.2018թ.	**Արթուր ԱՅՎԱԶՅԱՆ** 24.01.1977թ.	Ալումյան Հայկ Երեւան	21.02.2020թ.	03.04.2020թ.	600

Թիվ	Գանգատ թիվ Ներկայացման ամսաթիվը	Դիմումատուի անունը Ծննդյան ամսաթիվը	Ներկայացուցչի անունն ու գտնվելու վայրը	Կառավարության հայտարարությունն ստանալու ամսաթիվը	Դիմումատուի մեկնաբանություններն ստանալու ամսաթիվը, առկայության դեպքում	Յուրաքանչյուր դիմումատուին նյութական եւ ոչ նյութական վնասի եւ ծախսերի ու ծախքերի համար շնորհվող գումարը (եվրոյով)[1]
6.	11934/18 26.02.2018թ.	**Սպարտակ ՊԵՏՐՈՍՅԱՆ** 19.07.1994թ.	Ղարագյոզյան Արա Երեւան	03.03.2020թ.		1 000
7.	23929/18 10.05.2018թ.	**Զոհրաբ ՂՈՒՄԱՇՅԱՆ** 20.03.1989թ.	Ալումյան Հայկ Երեւան	21.02.2020թ.	03.04.2020թ.	800
8.	44102/18 10.09.2018թ.	**Սուրեն ՋԵՅՐԱՆՅԱՆ** 02.02.1991թ.	Թամրազյան Արման Երեւան	17.03.2020թ.		600
9.	53989/18 03.11.2018թ.	**Սարգիս ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ** 26.03.1989թ.	Գրիգորյան Համազասպուհի Երեւան	17.03.2020թ.	25.05.2020թ.	800

[1] Գումարած դիմումատուներից գանձման ենթակա ցանկացած հարկ: